մարդ էր: Ես յետոյ առիթ ունեցայ շատ բաներ լսել նրա մասին, որոնց բոլորի մէջ փայլում էր նրա անհամեմատ արիութիւնը: Քարաւանի պետը չէ կարող երկչոտ լինել, երբ միշտ վտանգների հետ կռիւ ունի: Բայց նա աւելի քան արիասիրտ էր: Նա ընդունակ էր մի ամբողջ զօրագունդ կառավարելու: Նա զուրկ չէր եւ մարդասիրական զգացմունքներից. ամէն դէպքում ես նկատում էի նրա ունեցած մեծ հակումը դէպի բարին եւ դէպի լաւը: Այդ պարապմունքի մէջ, որպիսին նա ունէր, պահպանել այնպիսի մաքուր բնաւորութիւն, դա ինձ զարմացնում էր: Բեռնակիր ձիապանները, ջորեպանները, անդադար գործ ունենալով անասունների հետ, այնքան կոպտանում են, որ մի աստիճան միայն բարձր են լինում անասուններից: Բայցնայ ջորեպանութիւնից համարեա մի արհեստ էր շինել եւ այնքան կատարելագործել էր, որ ես մեծ զարմանքով էի տեսնում այն կարգը, այն կանոնները, որ տիրում էին նրա քարաւանի մէջ:

Լապտերները հետզհետէ մարում էին, ուղեւորների շարժողութիւնը դադարում էր, եւ քարաւանի մէջ տիրում էր խորին լռութիւն: Միայն գետի մելամաղձոտ ձայնն էր լսւում եւ այն ձայնի մէջ կարծես ես կարդում էի քառասունհինգ դար առաջ այստեղ կատարուած անցքերի պատմութիւնը...

ԻԱ. ՀԱՅԿԱՅ ԲԵՐԴԸ

Դեռ արեգակը չէր ծագել, դեռ նոր զարթած թռչունները սկսել էին իրանց առաւօտեան ճլվլոցը, երբ ես աչքերս բաց արի, տեսայ՝ վրանի մուտքի առջեւ սպասում էին մեր թամքած ձիաները: Ասլանը ինձանից վաղ էր վեր կացել, պատրաստոել էր, ինձ եւս ասաց, որ շուտով հագնվիմ: Արթինը վրանում չէր: Ջորիները վաղուց արդէն բերել էին արօտից, համետում էին, գարի էին տալիս, որ, դեռ լոյսը չծագած, ճանապարհ ընկնեն:

Քարաւանը այդ րոպէում ներկայացնում էր մի վանք, որ կանխում էր հանդիպել տվնջեան լուսատոին: Ամէն կողմից լսելի էին լինում աղօթքի եւ հոգեւոր երգերի ձայն: Ես միշտ ախորժանոք էի լսում, երբ մահմեդականը Ղորանից այաթներ էր կարդում. նրա ընթերցանութեան մրմունջը ինձ յիշեցնում էր ջերմ, հրաբորբոք Արաբիայի անապատները եւ այդ անապատների կրակի միջից յայտնուած կրակոտ մարգարէին: Որքա՜ն մեծ զօրութիւն ունի գիրքը: Մի գիրք, մի լաւ երգուած գիրք, իր բարձր բանաստեղծութեամբ, իր հրաշալի լեզուով, կարողացել էր երկրագնդի մի նշանաւոր մասը կապել մի կրօնի հետ: Ես նախանձով էի նայում այդ մահմեդականների վրայ: Քարաւանի մէջ կային եւ հայեր, բայց նրանք չէին աղօթում: Հայը աղօթում է միայն